

ՏՍՄՆԵՐՈՐԻՒ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դիմը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում դրվում են միմյալից արտադրության մեջ:

Օտարաբարացիքը դիմում են սպորտի
Тифлисе. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաջօրեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար գնարում են
կրթարանից ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ում պարտաւորութիւնն է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ խմբագրին: Ներքին լուրերը—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց խնդիր Միա-
ցեալ ընկերութիւն: Մի գրագրութիւն: Նամակ
Թիֆլիսից.— ՀՆՈՒՎԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆ.Ն.Ե.Ր.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի կարևոր բա-
ցարութիւն:

ՈՒՄ ՊԱՐՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Է

Հայոց հասարակութեան մէջ դեռ չը կայ
մտաւոր կեանքի անհրաժեշտութեան պա-
հանջ, մեզանում գեռ ևս չէ կարելի իր
հացը ծարել մտաւոր կեանքի ասպարէզի
վրա գործելով: Մեզանում ամենանահաստատ
և ամենից քիչ վարձատրվող պարապմունք-
ները՝ մտաւոր կեանքի պարապմունքներն են:
Պաշտօնեան, արհեստաւորը, վաճառա-
կանը, փաստաբանը, բժիշկը,—բոլոր կա-
րող են իրանց ընտրած պարապմունքով ապ-
րել և նրանով ապահովել իրանց ընտանիքը,
մինչև անգամ հարստանալ իրանց այդ պա-
րապմունքով: Իսկ մտաւոր կեանքի մէջ ու-
չինչ պէտք չունենալով, հասարակութիւնը
չէ էլ վարձատրում այն անձանց, որոնք կու-
զենային իրանց նուիրել մտաւոր կեանքի
ասպարէզին: Այդ պատճառով, ինչքան էլ
լուսաւորված լինի հայը, եթէ նա անձնա-
կան կարողութիւն չունի, ապահովված չէ

նիւթագէտ,—նա չէ կարող իրան նուիրել
մտաւոր գործունէութեանը: Փաստաբանի,
պաշտօնեայի, կոչակարի, գինեկառնուի,
մանրամասնի, բժշկի, երկրագործի, բնու-
նակիր մշակի պարապմունքները վարձատր-
վում են մեզանում, իսկ մտաւոր գործու-
նէութեամբ ապրողների՝ ուսուցչի, դերա-
սանի, հեղինակի, գասախօսի, թարգմանչի,
խմբագրի գործունէութիւնը չէ վարձա-
տրվում:
Այդ պատճառով աղքատ, չբաւոր, նիւ-
թագէտ անապահով մարդը անկարող է մե-
զանում նուիրել իրան որ և է մտաւոր
գործունէութեանը: Բայց մտաւոր կեանքը
ամեն հասարակութեան, ամեն ազգին ան-
հրաժեշտ է, եթէ այդ հասարակութիւնը,
այդ ազգը չէ կամենում յաւիտենական ան-
շարժութեան, մտաւոր խաւարի, խոր տը-
գիտութեան և նախապաշարմունքների մէջ
մնալ: Եւ ահա հասարակութեան այդ ան-
ընական դրութեան շնորհով մտաւոր գոր-
ծունէութիւնը դառնում է միմյալից կար-
ողութիւն ունեցող անձանց արտօնութիւն:
Միայն այն մարդը մեզանում կարող է նուի-
րել իրան մտաւոր կեանքին, ով անձնական
կարողութիւն ունի, կամ ով ուրիշ պարապ-
մունքից ստացած վարձատրութեամբ ապա-
հոված է: Գրա հետեանքն այն է որ մը-
տաւոր կեանքի ասպարէզի մէջ մենք չու-
նենք մասնագէտներ, չունենք մարդիկ, ո-

րոնք կատարելագույն և միմյալից իրանց գոր-
ծին նուիրված լինէին,—այլ մեր մտաւոր
գործունէութեան մէջ ունենք միայն սի-
րոսիկներ:
Մեր ուսուցիչները, մեր վարժուհիները,
մեր դերասաններն ու դերասանուհիները,
մեր թարգմանիչները, մեր գասախօսները,
հեղինակներն ու խմբագիրները՝ իսկապէս
սիրողներ են միայն, քանի որ հայ հասա-
րակութիւնը չէ վարձատրում մտաւոր գոր-
ծունէութիւնը, աւելորդ համարելով մտա-
ւոր կեանքը:
Այդ պատճառով մեր ունեւոր դասի լու-
սաւորված մասը պէտք է հասկանայ, թէ
քանի որ չը կայ հայ հասարակութեան մէջ
ինքնաճանաչութիւն, չը կայ ամենանա-
հրաժեշտ մտաւոր պահանջների մասին
հասկացողութիւն,—նրա, այդ ունեւոր դա-
սի լուսաւորված մասի պարտքն է յանձն
առնել կատարելու այն բոլոր մտաւոր պաշ-
տօնները, որոնց յանձն չէ կարող առնել
կատարելու հայոց նոր սերունդի թէ և լու-
սաւորված, բայց չբաւոր մասը:
Հասարակութիւնը աւելորդ է համարում
ապահովել իր դպրոցները, այդ պատճառով
դպրոցը միջոց չունի օրինաւոր տեսուչ և
վարժապետներ վարձելու: Այդ հասկանալով
ունեւոր ընտանիքի որդին և աղջիկը, փո-
խանակ ամբողջ օրերը անգործ անցնելու,
պէտք է յանձն առնէին ձրի տեսչութիւն

և դասաւորութիւն յիշեալ դպրոցի մէջ:
Խմբագրի և գրողների աշխատութիւնը չէ
վարձատրվում, նրանով չէ կարող պարապել
թէ և լուսաւորված, տաղանդաւոր, բայց
աղքատ երիտասարդ, այլ նա իր կտոր հա-
ցը ծարելու համար պէտք է գնայ փաս-
տաբան, հաշտարար դասաւոր դառնայ—
և մեր ունեւոր դասին պատկանողները պէտք
է այնքան անուշութիւն, պարտաճանաչու-
թիւն ունենան, որ իրանք յանձն առնեն
իրանց հաշուով լրացրել հրատարակութիւ-
նը, խմբագրի պաշտօնը, աշխատակիցների
պարտաւորութիւնը: Քատրօնը հասակ ա-
ռածների համար դպրոց է, բայց դերասա-
նի գործը չէ վարձատրվում թող հարուստ-
ները, ունեւոր տղամարդիկ, կանայք և օրի-
որդներ կազմեն մշտական սիրողների մի
խումբ, և տանն գործը, մինչև որ հասա-
րակութեան մէջ կը վարձին պահանջ դե-
պի թատրօնը և դերասանի ու դերասա-
նուհու աշխատութիւնը կը սկսի վարձա-
տրվել:
Մենք խօսում ենք, ի հարկէ, մեր հա-
սարակութեան ունեւոր դասի լուսաւորված
մասի վրա, զբաւք միայն կարող են և
պէտք է լինեն պարտաճանաչ, պէտք է
կատարեն այն, ինչ որ դեռ ևս չէ կարող
կատարել ինքն հասարակութիւնը, նրանք
պէտք է հասկանան, թէ քանի որ չը կայ
հասարակութեան մէջ մտաւոր առաջադի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Միացեալ ընկերութեանց վերայ մեր ունեցած
համարումն, ինչպէս կը տեսնուի, հազարապա-
տիկ առաւել էր քան նմա այժմ ջատագով կանգ-
նող մի քանի անձանց կարծիքն այդ ընկերու-
թեան վերայ: Մեր առաւել քան դնոսա հակա-
ցած եմք, կարծեմք, թէ ընկերութիւնն, իւր
բնոյ հանրացած բնութիւն և ամբն, ստացած
վարկով, ամեն ուղղութեան բարեփոխմանը ըն-
դրուակ էր և ազգին մէջ լուս արժանա գտնելն
վերջն կարող էր աշխատի ազգին համար, ինչ
եղանակաւ որ պատշաճ դատել: Չէինք կարող
որինն աւելի յարմարաբար մի ընկերութեան
դիմել մեր առաջարկութիւնն անելու համար,
քանի որ Միացեալ ընկերութիւնն ամբողջ ազ-
գին միութեան կապին կը նկատելինք, քանի
որ նա հզորապէս գործելու ամեն հանգամանք-
ներն և կազմակերպութիւնն ունի: Եւ դարձեալ
ինչպէս հար էր նորա մասն մի ուրիշ ընկերու-
թիւն հիմնել կամ արդէն հիմնուածն ընդարձա-
կել: Ազգն կարող էր ուշադրութիւն իսկ անել
այն ամեն ընկերութեանց որք սունկի պէս կը
բուսնին մեր մէջ: Ինչ աշխատութիւն, ինչ յա-
րատութիւն պէտք եղաւ, որքան անձինք ինք-
զինքնին նուիրեցին միմյալ այդ ընկերութիւն-
ներն ազգին ծանօթացնելու համար և որք ծա-
ռայութիւններն այսօր չեն յիշել անգամ: Եթէ
Միացեալ ընկերութիւնն շարունակէր հասարա-
կութեան անտարբերութեանն ենթակայ լինելու
և նորա ոյժերն եթէ ամբողջ սպառէին, կը կար-
ձէին արդեօք ունենք թէ գիրքն էր գտնել դար-
ձեալ նոյն անձուներ անձինքն որք ազգին մէջ
բարեխօսն կրկին մի ուրիշ ընկերութեան հա-
մար: Ինչ պիտի մտածէր ազգին ընդհանրու-
թիւնն, ամեն ժամանակ նորաւոր ընկերութեանց
փայլին և խաւարին տեսնելով:
Եթէ ծայրագեղ պահպանողականք տակաւն

լով նախնական ուսմամբ զազգն փրկելու յաւակ-
նութիւնն ունին և մի ուրիշ ընկերութեան կը
թողուն արուեստավարութեան հոգն, այս մի
պատճառաւք է լով մեր տուած խորհուրդն բա-
ցարձակապէս մերժելու համար, վասն զի ինչ-
պէս վերս բացատրեցինք, Հայաստանի այժմեան
նախնական կացութեան մէջ ուսմանը և գիտու-
թիւնը այն ստիպողականութիւն չունին ինչ որ
ունին արդէն արուեստահմտութիւն ունեցող ժո-
ղովրդոց մէջ: Մեր ազգին այժմեան կացութեանն
նկատմամբ ինչ որ վերս խօսեցանք, հարկ չէ
վերստին կրկնել այս տեղ, բայց կը յաւելուք:
Եթէ ուսմանը և գիտութիւնն միմյալն ընտա-
կան լինէին ամեն բարիք ստանալու համար, ա-
մենէն ուսեալ ժողովուրդներն այսօր ամենէն
հարուստ և երջանակ ազգերն պէտք էին լինել:
և գիտեմք որ այնպէս չէ:
Եթէ բոլոր այս գաղափարներն այնքան նոր
էին որ պարմացունն կը պատճառեն այսքան:
Եթէ մեր ազգին մէջ քիչ անգամ քարոզած են
այս սկզբունքներն «Մասին» և «Արեւելեան Մա-
մուլ» ի թուրքիս և «Մշակ» ի Ռուսաստան: Ես
նոր է անշուշտ լսել այսպիսի մի կարծիք նոցա,
որք կանխակալ կարծեաց իբր լով և անխոր-
հուրդ արձագանք՝ ռուսմունք, գիտութիւն» կը
բացագանչեն և կը քարոզեն, նոցա՝ որք եւրօ-
պացի մի տնտեսագէտի գիրքն կը սերտեն թու-
թակի նման և կը զան իբր նորութիւն նորա
պարունակածներն ցոյց կը տան մեզի, առանց
կասկածելու անգամ թէ գոցէ այդ գիրքն ու-
րիշներն ևս կարողացած են և ժամանակ իսկ ու-
նեցել են խորհելու և դատելու թէ մինչև որ ա-
տիճան մեր ազգին այդ սկզբունքներն մերձեցու-
ցանելի են, և թէ որքան աննորիւի սխալանք է,
Հայաստանն գտնել երկու դար աւելի յառաջ
գնացած ժողովրդոց արարքն նորա համար ընդօ-
րինակելն:
Եթէ այս անուրանալի իրողութիւնն տակաւն
չը տեսնողներ կան, եթէ խարստակի յոյսերով
տակաւն անտողներ կը գտնուին, մինչև իսկ
եթէ Միացեալ ընկերութիւնն իւր ոչ պաշտօնա-
պէս յայտարարութեանն հակառակ, յաւիտենան

յարտեմել կը փափաքի նոյն ուղղութեան մէջ,
նոցա ազատութեան վերայ ոչ որ կարող է բը-
նանալ: Մեր փափաք իսկ չունիք յամաներն
համոզելու և, եթէ երան ելնեն սակէ վերջն,
խառնակներու հետ վիճարանութեան մտնելու:
Միայն ցանկացող ենք որ ձանձրութիւն չառնու
ոչ որ, ուր, երբ և ինչպէս մեր գործելն մեզի
ցոյց տալու: Այդ մասն մեզ կը վերաբերի և խը-
րափ կարօտութիւն չունիք:
Այս կարևոր բացատրութեան վերջն հարկ է
է որ մեր առաջարկութեան մասին շարամիտ
անձանց ուսանց տուած յիմար մեկնութիւններն
այստ անուշաք որ միանգամ ընդ միշտ ըմբ-
րանին: Յաւալի բայց ճշմարիտ մի եղելութիւն
է մեր ազգին մէջ որ ամեն անշահաօէր անձանց
տուած խորհուրդներն, փոխանակ նկատողու-
թեան առաքիչ լինելու, փոխանակ ազնիւ վի-
ճարանութեամբ լուսարանելու, այլ և այլ
վատ մեկնութեանց տեղի կը տան: Մի ձեռ-
նարկութիւն նուազելու վտանգի մէջ գտնուած
ժամանակ, վտանգ որ չեն բացարձակ խոստու-
մանի, երբ մին իւր խորհրդով այդ վտանգն ի
բաց մղել կաշխատի և անլսելի լինելով փոր-
ձանքն կը սպառնայ միշտ, անմիջապէս կըսկը-
սին այդ անձն պատճառ ցոյց տալ ամեն աղե-
տից: Ինչու: Վասն զի այդ ձեռնարկութեան
անհաստատ վիճակն նա զգաց և յայտնեց, վասն
զի կասեն, այդպէս անելով նորա վարկն խախ-
տեց, նորա համբաւն արատեց, մինչդեռ վարկ
և համբաւն արդէն նուազելու վրայ էին: Միա-
ցեալ ընկերութիւնք նոյն իսկ միմեանց յաջոր-
դող անօրէն ժողովոց խոստովանութեամբն,
նախկին յաջող վիճակն ունենալէ հետէ են: Այս
կայտնութեան պատճառներն մեք նորա ուղղու-
թեան ճիշդ չը լինեն կարծեցինք, այլք տար-
բի կերպով կը մեկնեն: Բայց ինչ որ լինին
այդ պատճառներն, կը հարցունեմք, ով է այդ-
տեղ մեզաւոր և ինչ անեն Գրիգոր Արծրունին,
Գրիգոր Նիկողոսեանն և աշխարհիս բոլոր Գը-
րիգորներն: Եթէ Միացեալ ընկերութեանց մեր-
ձակայ անկումն նախագուշակելով, որ բոլորովին
անտեղի մի երկիւղ է, կանխապէս մարդիկ կը

պարտաստեն որ մասնանի անելով, նորա անկ-
ման բուն պատճառներն սքողեն ժողովրդեան
առաջ, ամեն որ կանխաւ լուսութեան դասա-
պարտեն նախ պէտք է գիտնան թէ անձնաւ է,
Ժողովուրդն լաւ գիտէ թէ ընկերութեանց հաս-
տատութեանն համար ոչք աշխատեցան, և «Մը-
շակի» բազմաթիւ յօդուածներն դեռ կեցած են,
ուր այդ անձինքն հրաւերներ կարդալով և ա-
մեն յանդիմանութիւն տեղաւով Ռուսաստան
վերայ յաջողեցան 17,000 ռուբլ հաւաքել ի նը-
պատ այդ ընկերութեանց: Այդ գումարին քա-
ռապատին պիտի հաւաքէին եթէ սոյն վերայ
հանելով չը հարկադրէր դնոսա տալ իւրեանց
բոլոր ոյժն այդ ստիպողական գործին, որու
համար դարձեալ շուրջ 42,000 ռուբլ ժողովեցին:
Սոցա ընկերութեանց մատուցած ծառայութիւն-
ներն կերելի թէ արդէն նոցանկ են:
Իսկ մեք ի մասնաւորի, ընկերութեան արդի
ուղղութեան ջերմ կողմնակից չը լինելով իսկ,
համոզուած ենք թէ վերջապէս մի ծառայու-
թիւն է որ կը մատուցանի, ազգին, թէպէտ ա-
ւանց իւր կողմանն կատարելագույն պատասխա-
նելու, և այս պատճառաւ կը շարունակեմք
մասնակցել նորա աշխատութեանց:
Բայց ինչ կը նշանակեն ուսանց այն անմիտ և
դաւաճան խօսքերն, որ մի օրագրի մէջ անգամ
հիւրընկալութիւն գտան, իբր թէ կան մեր ազ-
գին մէջ այնպիսիք որք կուրանան բոլորովին
ուսմանց և գիտութեանց օգուտներն, թէ նախ-
նական, վայրենի կեանքն յարմարաբար կը հա-
մարին ժողովրդեան, և թէ—տեսէք որքան խո-
րամանկ են այդ պարոններն—իւրեանք լաւ հաս-
կացել են թէ բոլոր այս յարուցուած խնդիր-
ներն գաղտնի մի նպատակ կը ծածկեն, այն է
ընկերութիւնն վեր ի վայր տապալել և նորա
բեկորներուն վրայ պարել:
Մեր և մեզ նման խորհողներուն գաղափար-
ներն այսպիսի վատ ու յիմար կերպով խնդա-
թիւրդ անձանց եթէ չը պատասխանեմք, վըս-
տած եմք որ մեր լուսութիւնն բնաւ մի տարկեցտ
անձի գործանք չը պիտի պատճառէ:
Տ. ՓԵՏՏԻՄԱԼՃԵԱՆ